«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն. կոնֆլիկտներ

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Օֆելյա Բարբարյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք
N 2 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն....3
Ընտանիք....4
Ընտանեկան դերեր....5
Ընտանիքի հոգեբանությունը....6
Կոնֆլիկտներն ընտանիքում....7
Ընտանեկան կոնֆլիկտների պատճառները....9
Կոնֆլիկտային ընտանիքների տեսակները....10
Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև....11
Կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում....11
Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում....13
Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ....13
Եզրակացություն....15

Ներածություն

Ընտանիքը՝ որպես հասարակության կարևորագույն օղակ, խորը ուսումնասիրությունների և վերլուծությունների առարկա է: Ընտանիքում դերերի բաշխումը ու հարբերությունները, դրանց տեսակները, շեղումներն ու այդ շեղումների պատճառները ուսումնասիրվել և շարունակում են հետաքրքրության առարկա լինել հասարակական գիտությունների մի շարք ուղղությունների՝ սոցիոլոգիայի, հոգեբանության, մանկավարժության համար:

Կոնֆլիկտներն ընտանիքում հոգեբանական իրավիճակի, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների, արժեքային հենքի շեղումների պատճառ և հետևանք են: Գիտության տարբեր ճյուղեր փորձել են ուսումնասիրել և մեկնաբանել ընտանիքում կոնֆլիկտների առաջացման պատճառները, դրանց հետևանքները ինչպես ներընտանեկան հարաբերությունների, այնպես էլ մեծ հաշվով հասարակության առողջության վրա:

Սույն աշխատանքն արտացոլում է ընտանիք հասկացությունը, դրանում դերերի բաշխումը, փոխհարաբերությունների տեսակները, ընտանեկան հոգաբանությունը, կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը ընտանիքի անդամների հոգեվիճակի, ինչպես նաև երեխաների դաստիարակության և վարքի վրա:

Ընտանիք

«Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են»[1]: Ահա այսպես է սահմանվում ընտանիքը՝ որպես հասարակության կարևորագույն օղակ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում և ավելի մանրամասն մեկնաբանվում ՀՀ ընտանեկան օրենսգրքում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության՝ բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. «Ընտանիքը հասարակության բջիջն է»: Այսինքն՝ հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ ե՞րբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն՝ առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ[2]:

Ընտանիքը հասարակության տարրական բջիջ է՝ մարդկանց փոքր խումբ: Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև

---

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 16

[2] (www.hogeban.info, n.d.)

գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից: Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է, որը կարող է աստիճանակարգային (հիերարխիկ) լինել: Այստեղ կա լիդեր (երբեմն, մեծ ընտանիքներում, մեկից ավելի), կան ենթականեր (կատարողներ), յուրաքանչյուր անդամ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր կարգավիճակը և համապատասխան դերերը: Որոշ ընտանիքներում լինում է միայն մեկ լիդեր, որը կարող է լինել ավտորիտար կամ ժողովրդավար անձնավորություն: Բայց այժմ մեծաթիվ են այսպես կոչված էգալիտար (հավասարության վրա հիմնված) ընտանիքները, որի անդամները (առնվազն ամուսինները) հավասար կամ գրեթե հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն: Սա արդեն ժողովրդավարական կամ ազատական-ժողովրդավարական ընտանիք է:

Ընտանեկան դերեր

Ընտանեկան դերերը բոլոր այն սոցիալական դերերն են, որոնք անձիք կատարում են՝ ի հետևանք այն բանի, որ ունեն ընտանիք և այնտեղ որոշակի դիրք են զբաղեցնում: Այդտեղ «ընտանեկան դեր» հասկացությունն ընդհանուր բնույթ ունի: Ընդհանրապես ընտանեկան դերերը կարելի է բաժանել երկու խմբի՝

- ներընտանեկան դերեր
- միջընտանեկան դերեր

Ներընտանեկան են այն կարգավիճակներն ու դերերը, որ ընտանիքի անդամներն ստանձնում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործունեության մեջ մտնելիս: Դրանք են ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, եղբայր, քույր): Ընտանիքի զավակների այդ դերերը միակն են, քանի դեռ նրանք սեփական ընտանիքներ չեն ստեղծել և նոր դերեր չեն ստանձնել:

Այսինքն, դրանք այն կարգավիճակներն ու դերերն են, որ ունեն բջջային ընտանիքի անդամները: Այն դեպքում, երբ գործ ունենք ընդլայնված և նահապետական ընտանիքների հետ, պարզվում է, որ կան նաև պապի և տատի, մորաքրոջ, մորեղբոր և այլ դերեր, կախված այն բանից, թե ընտանիքն ինչ չափով է ընդլայնված բջջային ընտանիքի համեմատությամբ: Հասարակության մեջ ընտանիքները հազվադեպ են լիովին մեկուսացված լինում ավելի լայն՝այսպես կոչված սոցիետալ միջավայրից: Մարդիկ ունեն ազգակցական կապեր, որոնց մի զգալի մասն ընտանիքի հոգեբանության սահմաններում կարելի է դիտել որպես այնպիսիք, որոնք ծնում են հատուկ տեսակի՝ միջընտանեկան դերեր: Օրինակ, որևէ անձի կողմից կատարվող հորաքրոջ դերը, եթե ինքն ունի իր առանձին ապրող բջջային ընտանիքը, միջընտանեկան դեր է[3]:

Ընտանիքի հոգեբանությունը

Ընտանիքի հոգեբանություն, հոգեբանության բաժին է, որն ուսումնասիրելով էվոլյուցիան ու բնույթը ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ[4]:

1960-1970-ական թվականներին՝ ամուսնությունն ու ընտանիքը հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից: Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները: Ավելի ուշ, ընտանիքի հոգեբանության

[3] (Սեդրակյան, 2011)
[4] (Л.Б., 2009)

տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ պատմությունը և էվոլյուցիայի ամուսնության ձևը, ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները և այլն:

Ընտանիքն իր գոյության ընթացքում անցնում է փոփոխությունների մի երկարատև գործընթաց, որը կարելի է բաժանել փուլերի (կամ շրջանների): Դիտարկելով բջջային ընտանիքի կյանքի ուղին՝ ստեղծվելու պահից մինչև նրա վերացումը(երբ ամուսինները մահանում են), կարելի է տեսնել փոփոխությունների մի ամբողջ շղթա:

Ամեն մի փոփոխություն չէ, որ կարելի է զարգացում համարել: Որոշ փոփոխություններ, անկասկած, ունեն զարգացման բնույթ, բայց կան նաև ընտանիքի կենսագործունեության այնպիսի փուլեր, որոնք կամ լրիվ հետընթաց (ռեգրեսիվ) բնույթ ունեն, կամ էլ պարունակում են քայքայման, հետաճի տարրեր:

Յուրաքանչյուր ընտանիք ունի ինչպես առաջադիմական զարգացման, այնպես էլ հետընթացի, քայքայման և ճգնաժամերի փուլեր: Այդպիսին է իրականությունը, որը և պետք է արտացոլվի ընտանիքի հոգեբանության գիտական տեսության մեջ[5]:

Կոնֆլիկտներն ընտանիքում

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

[5] Սեդրակ Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն Երևան 2010

Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ[6]:

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Սա է պատճառը, որ մանկավարժության տեսանկյունից խիստ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտները և դրանց ազդեցությունը երեխաների վարքի և հոգեբանության վրա:

Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում:

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես §մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»[7]:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ §կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»[8]:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. §Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»[9]:

---

[6] (Միրզոյան, 2014)
[7] Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. - 144с
[8] Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с
[9] Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с.

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է[10]:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառները

Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց:

Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

---

[10] Վ. Խ. Միրզոյան, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ, 2014, էջ 225

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Կոնֆլիկտային ընտանիքների տեսակները

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են[11].

- նևրոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում: Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական զույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա

[11] Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с

նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեսոմատիկ և այլ հիվանդություններ:

Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև

Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի «ծանր» բնավորությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլև:

Կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում:

Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի

նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա:

Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել §իդեալական ծնողի¦ իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» և «իրական» ծնողների միջև:

Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ:

Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների:

Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում

Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը:

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում «նորմալ» է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ

Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում:

Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել

բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Այս ամենի հիմքում ներընտանեկան կարգավիճակներն ու դերերն են, որոնք ընտանիքի անդամները ստանձնում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործունեության մեջ մտնելիս: Դրանք են ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, եղբայր, քույր): Ընտանիքի զավակների այդ դերերը միակն են, քանի դեռ նրանք սեփական ընտանիքներ չեն ստեղծել և նոր դերեր չեն ստանձնել: Այսինքն, դրանք այն կարգավիճակներն ու դերերն են, որ ունեն բջջային ընտանիքի անդամները: Այն դեպքում, երբ գործ ունենք ընդլայնված և նահապետական ընտանիքների հետ, պարզվում է, որ կան նաև պապի և տատի, մորաքրոջ, մորեղբոր և այլ դերեր, կախված այն բանից, թե ընտանիքն ինչ չափով է ընդլայնված բջջային ընտանիքի համեմատությամբ: Հասարակության մեջ ընտանիքները հազվադեպ են լիովին մեկուսացված լինում ավելի լայն՝այսպես կոչված սոցիետալ միջավայրից:

Եզրակացություն

Ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ծանր» բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ, անհրաժեշտության դեպքում դիմել համապատասխան մասնագետի,

2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,

3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Աղբյուրներ

www.hogeban.info. (n.d.). Retrieved from http://www.hogeban.info/17171717.php#tips

А.В., С. (2002). *Социология управления.* СПб.: Бизнес-пресс.

А.М., С. (2003). *Общая и профессиональная психология. .* М.: ЮНИТИ-ДАНА.

Б.М., Р. (1990). *Психологические основы управления школой.* Ставрополь: СГПИ.

Л.Б., Ш. (2009). *Семейная психология.*

Н.А., Л. (2008). *Конфликтология .* Минск: Изд-во МИУ.

ՀՀ Սահմանադրություն. (2015).

Միրզոյան, Վ. Խ. (2014). *ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ.*

Սեդրակյան, Ս. (2011). *«Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը».*